

ԽՆԴԻՐՆԵՐ


Խնդիրների լուծման համար տրվում է 75 րոպե

3-4-րդ դասարաններ

- Հաշվիչ օգտագործել չի թույլատրվում:
- Յուրաքանչյուր խնդրի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված խնդրի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 96 միավոր:
- Մրցույթի ավարտին խնդիրների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:

3 միավոր գնահատվող խնդիրներ

1. Անահիտը, Բաբկենը, Գայանեն, Դավիթն ու Երվանդը գցեցին երկուական գառ: Նրանցից յուրաքանչյուրը գումարեց իր գցած գառերի վրայի կետերի թվերը (տե՛ս նկարը): Ո՞ւմ գումարն է ամենամեծը:




- (A) Անահիտ (B) Բաբկեն (C) Գայանե (D) Դավիթ (E) Երվանդ

2. Այսօր փոքրիկ Կենգան 7 շաբաթական և 2 օրական է: Քանի՞ օրից նա կլինի 8 շաբաթական:


- (A) 1 (B) 2 (C) 3 (D) 4 (E) 5

3. $17 + 3$ $20 - 16$



- (A) 24 (B) 28 (C) 36 (D) 56 (E) 80


4. Ի՞նչ է տեսնում Պիպոն, երբ իրեն նայում է հայելում:



5. Արմինեն մի քանի խնձոր բաժանեց իր և իր 5 ընկերների միջև: Յուրաքանչյուրը ստացավ կես խնձոր: Քանի՞ խնձոր բաժանեց Արմինեն:


- (A) 2 ու կես (B) 3 (C) 4 (D) 5 (E) 6

6. Գևորգն ու նրա հայրը գնացին կրկես: Նրանց նստատեղերի համարներն են 71 և 72: Նրանք ո՞ր կողմ պետք է գնան:




Նստատեղերը	
	1-ից 20
	21-ից 40
	41-ից 60
	61-ից 80
	81-ից 100

7. Ուղղանկյան մի մասը թաքնված է վարագույրի հետևում: Ի՞նչ տեսք ունի թաքնված մասը:




8. Պատասխանի տարբերակներից ո՞րն է ճիշտ նկարագրում նկարը:

- (A) Շրջանների քանակը հավասար է քառակուսիների քանակին:
 (B) Շրջանների քանակը փոքր է եռանկյունների քանակից:
 (C) Շրջանների քանակը երկու անգամ մեծ է եռանկյունների քանակից:
 (D) Քառակուսիների քանակը մեծ է եռանկյունների քանակից:
 (E) Եռանկյունների քանակը երկուսով մեծ է շրջանների քանակից:



4 միավոր գնահատվող խնդիրներ

9. Հինգ երեխա ունի թղթե քառակուսի, եռանկյուն և շրջան: Երեխաներից յուրաքանչյուրը տեղադրում է դրանք իրար վրա, ինչպես ցույց է տրված նկարում: Քանի՞ երեխա է եռանկյունը տեղադրել անմիջապես քառակուսու վրա:



- (A) 0 (B) 1 (C) 2 (D) 3 (E) 4

10. Տիգրանն ուզում է քառակուսու դատարկ վանդակներում 1-ից 9 թվանշաններից երկուսը գրել այնպես, որ բոլոր չորս թվերի գումարը հավասար լինի 20-ի (տե՛ս նկարը): Քանի՞ եղանակով նա կարող է դա անել:

3	
	9


- (A) 5 (B) 6 (C) 7 (D) 8 (E) 9

11. Չավենն ունի երկու քար: Նա քարտերի երկու երեսներին թվեր է գրել: Առաջին քարտի վրա գրված թվերի գումարը հավասար է երկրորդ քարտի վրա գրված թվերի գումարին: Չորս թվերի գումարը 32 է: Պատասխանի տարբերակներում բերված թվերի գույգերից ո՞րը կարող է գրված լինել քարտերի չերևացող երեսներին:

5	12
---	----

- (A) 6 և 3 (B) 7 և 0 (C) 8 և 1 (D) 9 և 2 (E) 11 և 4

12. Պատասխանի տարբերակներում բերված սալիկներից ո՞րը պետք է տեղադրել նկարի պատկերի մեջտեղում այնպես, որ միմյանց հպվեն միայն նույն գույնի գծերը:




13. 2016 տարեթվի թվանշանների գումարը 9 է: 2016-ից հետո n-ր տարեթվի թվանշանների գումարը նորից կլինի 9:

- (A) 2007 (B) 2025 (C) 2034 (D) 2108 (E) 2134

14. Նկարում բերված հինգ մարմիններից n-ր երեքը կարելի է միացնել այնպես, որ ստացվի քառակուսի:

- (A) X, Y և Z (B) V, U և Y (C) V, Z և Y
(D) V, X և Y (E) U, X և Y




15. Լևոնը սկսեց թվեր գրել աղյուսակի վանդակներում (տե՛ս նկարը): Նա որոշեց, որ յուրաքանչյուր տողում և յուրաքանչյուր սյունակում 1, 2 և 3 թվերից յուրաքանչյուրը գրելու է միայն մեկ անգամ: Որքա՞ն կլինի այն թվերի գումարը, որովք Լևոնը կգործի A և B վանդակներում:

1		
	2	A
		B

- (A) 2 (B) 3 (C) 4 (D) 5 (E) 6

16. Հովհաննեսն ունի 11 քառակուսիներից կազմված ժապավեն: Նա դրամներ է տեղադրում ժապավենի ութ հարևան քառակուսիներում այնպես, որ դրամների միջև դատարկ քառակուսիներ չմնան: Ժապավենի վրա ամենաշատը քանի՞ քառակուսիում հաստատ դրամ կլինի, եթե Հովհաննեսը դրանք ժապավենի վրա դասավորի ցանկացած ձևով՝ խնդրում բերված պայմանի համաձայն:




- (A) 1 (B) 3 (C) 4 (D) 5 (E) 6

5 միավոր գնահատվող խնդիրներ

17. Շրջելով քարտը դրա աջ կողմից՝ կտեսնենք նկարում բերված պատկերը: Ի՞նչ կտեսնենք, եթե քարտը շրջենք դրա վերևի կողմից:


- (A) (B) (C) (D) (E)



18. Լուսինեն, Լիլիթն ու Լալան եովորյակներ են (երեք քույրեր, որոնք ծնվել են նույն օրը): Նրանց քույր Նունեն երեք տարով մեծ է նրանցից: Բերված թվերից n-րը կարող է լինել չորս քույրերի տարիքների գումարը:

- (A) 25 (B) 27 (C) 29 (D) 30 (E) 60

19. Կարինեն ցանկանում է սեղանին տեղադրել հինգ թաս այնպես, որ ամեն հաջորդ թասի քաշը ավել լինի նախորդի քաշից: Նա արդեն տեղադրել է Q, R, S և T թասերը ճիշտ կարգով (տե՛ս նկարը):



T թասը ամենածանրն է: Կարինեն որտե՞ղ պետք է տեղադրի Z թասը:

- (A) Q թասի ձախ կողմում (B) Q և R թասերի միջև (C) R և S թասերի միջև
(D) S և T թասերի միջև (E) T թասի աջ կողմում

20. Իմ շների թաթերի քանակը 18-ով մեծ է նրանց քթերի քանակից: Քանի՞ շուն ունեմ ես:

- (A) 4 (B) 5 (C) 6 (D) 8 (E) 9

21. Կախարդական այգում աճում են կախարդական ծառեր: Յուրաքանչյուր ծառի վրա կան 6 տանձ ու 3 խնձոր կամ 8 տանձ ու 4 խնձոր: Այգում կա 25 խնձոր: Քանի՞ տանձ կա այգում:




- (A) 35 (B) 40 (C) 45 (D) 50 (E) 56


22. Նարեկը գումարեց յոթ թիվ և ստացավ 2016: Այդ թվերից մեկը 201-ն է: Նա 201-ը փոխարինեց 102-ով և նորից գումարեց բոլոր թվերը: Ի՞նչ ստացավ Նարեկը արդյունքում:

- (A) 1815 (B) 1914 (C) 1917 (D) 2115 (E) 2118

23. Մեսրոպը լեզոյի 27 բաղադրիչ մասնիկներից չորսու է կառուցել (տե՛ս նկարը): Նա բաժանում է չորսուն այնպես, որ ստացված մասերից մեկի երկարությունը երկու անգամ մեծ է լինում մյուսի երկարությունից: Մեսրոպը նույն եղանակով բաժանում է ստացված նոր չորսուներից մեկը: Նա նույն եղանակով շարունակում է բաժանել բոլոր ստացված մասերը: Պատասխանում բերված մասերից n-րը Մեսրոպը չի կարող ստանալ նման բաժանումների ընթացքում:



24. Հինգ ճնճղուկ նստած են ճյուղի վրա, ինչպես ցույց է տրված նկարում: Յուրաքանչյուր ճնճղուկ ծվլում է այնքան անգամ, որքան ճնճղուկ տեսնում է: Օրինակ՝ Աննան ծվլում է չորս անգամ: Այնուհետև ճնճղուկներից մեկը շրջվում է և նայում հակառակ ուղղությամբ: Կրկին յուրաքանչյուր ճնճղուկ ծվլում է այնքան անգամ, որքան ճնճղուկ տեսնում է: Այս անգամ ծվլոցների ընդհանուր քանակը մեծ է առաջին անգամվա ծվլոցների քանակից: Ո՞ր ճնճղուկն էր շրջվել և նայում հակառակ ուղղությամբ:



- (A) Աննա (B) Բելա (C) Գոռ (D) Դավիթ (E) Եվա